

1574

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԿՐԾՆԻ



ՏԳԱՐԱՆ Տ. Մ. ՌՕՏՈՆԵԱՆ

ԹԻՖԼԻՍ 1910

2(075)

U-15

45

КНИЖ. МАГАЗ.
"ПРОСВЕЩЕНИЕ"
БАНУ
ПАРАЧЕТЪ

Варварова

Нина Саркисова
ученица II класа

2-34

См. Б. Л. О.
См. Б. Л. О.
См. Б. Л. О.



рам

U-15 210

03 AUG 2009

Գ. ՏԱՐԻ
ՃԱ. տպ.

ԴԱՍԱՏԵՏՐ

ԿՐՕՆԻ

ՄԱՐԿԱՆ



ՀԱՄԱՅՈՒՆ ՆՈՐԱԳՈՅՆ ԾՐԱԳԻՐ

ՍԱՀԱԿ Ա. ԳՀ. ՍԱՀԱԿՆՆՆՆ

ՏՊԱՐԱՆ Տ. Մ. ՌՕՏԻՆԵԱՆ
ԹԻՖԼԻՍ 1910

25 JUL 2013

1574

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԱՏԹԵՈՍ Բ.

Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց,
Ծայրագոյն Պատրիարքի Համազգական Նախամե-
ծար Արարատեան Առաքելական Մայր Աթոռոյ
Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի:



3215-2004

ԻՍՐԱՅԷԼԱՅԻՈՅ ԱԶԳԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ը. Մ Ո Վ Ս Է Ս

Ա. ՄՈՎԱԵԼ

1. ԻՍՐԱՅԷԼԻ ՆԵՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

Յովսէփը մեռել էր: Մեռել էին և նրա բո-
լոր եղբայրները. այդ ժամանակից անցել էր 430
տարի, բայց նրանց ժառանգներն այնքան բազ-
մացել էին, որ Գեսեմ երկիրը լցուել էր: Այդ
ժամանակ Եգիպտոսում նոր փարաւոն էր թա-
գաւորում, որը Յովսէփին մոռացել էր: Նա ասաց
Եգիպտացիներին. «Իսրայէլացիները Հափից դուրս
բազմացել են, եթէ մի պատերազմ պատահի,
կարող են մեր թշնամու հետ միանալ ու մեր
դէմ պատերազմել, ուստի պէտք է նրանց ոչըն-
չացնել»:

Սրա համար թագաւորը վերակացուներ նշա-
նակեց, որ Հարչարեն նրանց: Եգիպտացիներն
անգուլթ կերպով ստիպում էին իսրայէլացիներին:


աշխատելու թէ աղիւսի գործարաններում և թէ
դաշտում—փարաւոնի համար բերդեր և շտեմա-



Փարաւոն

բաններ էին շինում, այն էլ ձրի: Բայց որքան
եգիպտացիները շարձարում էին խորայէլացիներին,
այնքան սրանք աճում և բազմանում էին:

Փարաւոնը
Փարաւոնը տեսաւ, որ այս միջոցով իւր նպա-
տակին չէ հասնում, հրամայեց, որ խորայէլաց-



ւոց նորածին *արու* գաւակները ջուրը ձգեն, իսկ
աղջկանց՝ խնայեն:

2. ՄՈՎՍԷՍԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

Այս ^{շեղի} նոր հրամանի ժամանակ Ղևի ցեղից մէկը՝ Ղեւի անունով ամուսնացաւ և մի գեղեցիկ արու գաւակ ունեցաւ։ Մայրը երեք ամիս ծածուկ էր պահում։ Երբ այլ ևս անկարող եղաւ թաք կացնել, եղեգնից մի զամբիւղ հիւսեց. կպրծիւթով ծեփեց. տղային մէջը դրաւ և Նեղոսի եղեգնուտ ափը թողեց։ Մանուկի քոյրը հեռուից դիտում էր, որ տեսնէ թէ եղբօրն ինչ է պատահում։

Հէնց այդ ժամանակ Փարաւոնի աղջիկը Նեղոսի ափն իջաւ լողանալու։ Նաժիշտները գետի ափում շրջում էին։ Թագաւորի աղջիկը հեռուից նկատեց զամբիւղը, նաժիշներից մէկին ուղարկեց, որ բռնէ։ Հրամանը կատարուեց, զամբիւղն իրան բերին, բաց արեց ու տեսաւ, որ մէջը մի մանուկ լաց էր լինում։ Թագաւորի քոյրը զթաշարժուեց և ասաց. «Սա իսրայէլացի պիտի լինի»։ Մանուկի քոյրը մօտեցաւ և ասաց փարաւոնի աղջկան. «Արդեօք չես կամենայ մի իսրայէլացի մայր կանչեմ, որ մանուկին կերակրէ»։ Փարաւոնի աղջիկն ասաց. «Գնա և կանչիր»։

Աղջիկն շտապեց հարազատ մօրը կանչելու։ Մայրն եկաւ։ Փարաւոնի աղջիկն ասաց. «Ա՛ռ այս մանուկը, մեծացրո՛ւ, ես քո վարձը կվճարեմ»։ Մայրն առաւ երեխային և պահում էր նը-

րան։ Երբ մեծացաւ, թագաւորի աղջկայ մօտ բերաւ։ Իշխանուհին որդեգրեց նրան և անուանեց Մովսէս, որ նշանակում է ջրից հանած։

Մովսէս



Մովսէսն ուսաւ եգիպտոսում այն բոլոր գիտութիւնները, որոնք յայտնի էին այն ժամանակ և զարձաւ մի իմաստուն մարդ։

3. Մ Ո Վ Ս Է Ս Ի Փ Ա Խ Ո Ւ Ս Տ Ը

Երբ Մովսէսը 40 տարեկան դարձաւ, գնաց Գեսեմ իսրայէլացիները վիճակի հետ ծանօթանալու: Մի անգամ նա տեսաւ, որ վերակացուն իւր հայրենակիցներից մէկին ծեծում էր: Նայեց իւր շուրջը և երբ ոչ ոքի չտեսաւ, սպանեց եգիպտացուն և աւագի մէջ թաղեց:

Միւս օրը ևս գնաց և տեսաւ, որ երկու իսրայէլացիներ միմեանց հետ կռուում են: Մովսէսը դարձաւ յանցաւորին ու ասաց. «Ի՞նչու ես քո ընկերին ծեծում»: Նա պատասխանեց. «Քեզ ով նշանակեց մեզ վրայ դատաւոր, չլինի՞ ինձ էլ երեկուայ եգիպտացու նման ուղղում ես սպանել»: Մովսէսը զարհուրեց, երբ իմացաւ, որ իւր սպանութիւնը յայտնուել է: Այս բանը փարաւոնի աւանջին ևս հասաւ: Նա կամենում էր սպանել Մովսէսին, բայց սա փախաւ Մադիամացոյց երկիրը:

Մադիամի քուրմը եօթն աղջիկ ունէր: Նրանք եկան ջրհորի մօտ՝ խաշները ջրելու համար: Ուրիշ հովիւներ ևս եկան և աղջիկներից խլեցին ջրի հերթը: Մովսէսը տեղից վեր կացաւ, օգնեց աղջիկներին և խաշներին խմացրեց:

Երբ աղջիկները տուն դարձան, հայրը հարցրեց. «Ի՞նչու այսօր վաղ եկաք»: Նրանք պատասխանեցին. «Մի եգիպտացի օգնեց մեզ, ջուր

հանեց և մեր ոչխարներին խմացրեց»: Յովթորն ասաց. «Ո՞րտեղ է այն մարդը, ի՞նչու նրան հացի չկանչեցիք»: Մովսէսին տուն հրաւիրեցին: Յովթորը յանձնեց նրան իւր ոչխարները, որ արածացնէ և վերջը իւր Սնալովրա աղջկայ հետ ամուսնացրեց:

4. Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Կ Ա Ն Չ Ո Ւ Մ Է Մ Ո Վ Ս Է Ս Ի Ն

Մովսէսն արածացնում էր Յովթորի խաշներն անապատում: Մի անգամ մօտեցաւ Զորեք լեռանը և տեսաւ, որ մի մորենի վառվում էր, քայց չէր այրում: Մովսէսը մօտեցաւ իմանալու, թէ սա ինչ բան է: Իսկոյն թփի միջից ձայն եկաւ. «Մովսէս, Մովսէս»: Նա պատասխանեց. «Ի՞նչ է, Տէր»: Զայնը կրկնեց. «Հան կօշիկներդ, այդ տեղը, որ դու կանգնած ես, սուրբ է: Ես եմ Աբրահամի, Իսահակի և Յակովբի Աստուածը. ես տեսայ իմ ժողովրդի նեղութիւնը եգիպտոսում. ես կամենում եմ նրանց Քանան տանել, ուր մեղը և կաթն է բոլորում. ես քեզ ուղարկում եմ եգիպտոս փարաւոնի մօտ, որ իմ ժողովրդին ազատես»: Մովսէսն ասաց Աստծուն. «Եթէ ես իսրայէլացւոյց մօտ գնամ և ասեմ, թէ ձեր հայրերի Աստուած Ինովան ինձ ուղարկեց, չեն հաւատայ»: Աստուած ասաց. «Զեռիդ գա-

«ազանը գետին ձգիր»: Նա էլ ձգեց և գաւազանը օձ դարձաւ: Մովսէս վախեց և փախաւ: Աստուած ասաց. «Բռնիր օձին»: Նա բռնեց և օձն իսկոյն գաւազան դարձաւ: Աստուած շարունակեց. «Ձեռդ ծոցդ դիր»: Դրաւ, բայց դուրս հանելիս՝ տեսաւ, որ բորոտուել է—սպիտակ՝ ինչպէս ձիւն: Աստուած ասաց նրան. «Ձեռդ նորից ծոցդ դիր»: Նա էլ կատարեց և տեսաւ, որ միւս ձեռի նման առողջ է: Աստուած ասաց. «Եթէ այս երկու հրաշքներին չեն հաւատայ, Նեղոսից ջուր կ'առնես, կ'սրսկես գետնի վրայ—գետի ջուրն իսկոյն արիւն կ'դառնայ»:

Մովսէսն ասաց Աստծուն. «Տէր, ես ծանրալեզու եմ»: Աստուած ասաց. «Քո ճարտարախօս եղբայր Ահարոնը քեզ հետ կ'գայ, քո փոխարէն ժողովրդի հետ նա կ'խօսէ»:

Այս բանից ետոյ Մովսէսը Յոթորի մօտ գնաց և ասաց. «Ուզում եմ Եգիպտոս դառնալ և տեսնել, թէ իմ եղբայր իսրայէլացիները կենդանի են թէ ոչ»: Յոթորն էլ ասաց. «Գնա խաղաղութեամբ»: Մովսէսն անապատում հանդիպեց Ահարոնին և յայտնեց նրան Աստծու կամքը: Մովսէսը տեղեկացաւ, որ հին փարաւոնն արդէն մեռել է: Երկու եղբայրները գնացին Գեսեմ և Իսրայէլի ժողովրդեան ծերերին իմիասին հաւաքեցին: Ահարոնը յայտնեց նրանց Աստծու կամքը, իսկ Մովսէսը ցոյց տուաւ հրաշքները ժողո-

վրդի առաջ: Երբ ծերերն իմացան, որ Աստուած ուզում է իրանց ազատել, սկսեցին աղօթել և շնորհակալութիւն անել:

5. Ե Գ Ի Պ Տ Ո Ս Ի Յ Դ Ո Ի Ր Ս Գ Ա Լ Ը

Ժողովրդի կամքն առնելուց ետոյ՝ Մովսէսն ու Ահարոնը գնացին փարաւոնի մօտ ու ասացին. «Իսրայէլի Աստուածն ասում է—արձակիր իմ ժողովրդին»: Փարաւոնը բարկացաւ և ասաց. «Այդ Աստծուն ես չեմ ճանաչում»:

Փարաւոնն իսկոյն հրամայեց վերակացուներին, որ ժողովրդին աւելի չարչարեն: Վերակացուներն էլ թագաւորի կամքը կատարեցին:

Իսրայէլացիները դանդատուեցին Մովսէսին, Ահարոնին և ասացին. «Աստուած ձեր դատաստանն անէ. դուք թագաւորին բարկացրիք մեզ վրայ»: Մովսէսն սկսեց խնդրել Աստծուն և ասել. «Տէր, ի՞նչու ես քո ժողովրդին այդպէս չարչարում, այն օրից, երբ ես փարաւոնի մօտ գընացի, ժողովրդին աւելի են չարչարում»: Աստուած ասաց Մովսէսին. «Այժմ դու կ'տեսնես, թէ ես փարաւոնին ի՞նչ կ'անեմ»:

Սրանից ետոյ Աստուած մինը միւսի ետեւից պատիժներ ուղարկեց եգիպտացիների համար—գորտ, մուկը, կարկուտ, մորեխ... միայն

Գեսէմ երկիրը ազատ մնաց: Այն ժամանակ ե-
գիպտացիներն ասացին. «Աստուած սրանց հետն
է»: Հէնց որ պատիժը գալիս էր, փարաւոնն ա-
սում էր Մովսէսին և Ահարոնին. «Ժողովրդին
կարծակեմ», իսկ երբ պատիժն անցնում էր,
խօսքը փոխում էր:

Աստուած ասաց Մովսէսին. «Մի պատիժ
էլ կուղարկեմ և փարաւոնն անպատճառ կարծա-
կէ ձեզ»: Ուղիղ կէս գիշերին Եգիպտոսի բոլոր
անդրանիկները կմեռնեն, իսկ իսրայէլացիներին
ոչ ոք չի փասուի:


Աստուած շարունակեց խօսել Մովսէսի հետ.
«Յայտնիր իսրայէլի ժողովրդին, որ այս ամիսը
նրանց համար առաջին ամիսը (Նիսան) պիտի
լինի. ուղիղ այս ամսի տասն եւ չորսին ամեն
տան տէր երեկոյեան թնդ-մի զառը մորթէ. ամ-
բողջապէս խորովէ և իւր ընտանիքի հետ ուտէ
գիշերը: Իրա հետ պէտք է ուտեն ըստ իշխան-
ութեան — սա կլինի վերջին ընթրիքը Եգիպտոսում: Ընթ-
րիքն այսպէս կանեն — գօտին կապած, կօշիկնե-
րը հագած, գաւազանը ձեռին — պատրաստ ճա-
նապարհ դուրս գալու համար: Այդ օրը տօն
կլինի և մեն տարի կկատարեն — տօնի անունն
է Զատիկ կամ Պասէք»: Այդպէս էլ արին իսրա-
յէլացիները:

Այդ միևնույն գիշերն Աստուած սպանեց Ե-
գիպտոսի բոլոր անդրանիկներին — ամեն տեղ սուգ



էր: Փարաւոնն իսկոյն կանչեց Մովսէսին, Ահա-
րոնին և ասաց. «Շտապեցէք, հեռացէք իմ երկ-
րից»: Այսպէս Եգիպտոսից դուրս եկան իսրայէ-
լացիները՝ թուով վեց հարիւր հազար՝ չհաշուե-
լով կանանց և երեխաներին: Իսրայէլացիները

մնացին Եգիպտոսում 430 տարի: Մովսէսը տա-
րաւ իւր հետ Յովսէփի ոսկորները ևս: Աստուած
նրանց մի ամպէ սիւն տուաւ՝ ցերեկը, իսկ մի-
կրակէ սիւն էլ՝ գիշերն առաջնորդելու համար:



6. ԿԱՐՄԻՐ ԾՈՎՆ ԱՆՅՆԵԼԸ

Թագաւորի սիրալ նորից փոխուեց—նա ա-
սաց. «Ի՞նչու արձակեցի ձրի մշակներին»: Ուս-
տի վեր առաւ զօրք, վեց հարիւր պատերազմա-
կան կոտոր, հեծելազօր, ընկաւ իսրայէլացիներէ
ետեից և հասաւ նրանց Կարմիր ծովի մօտ:

Երբ իսրայէլացիները տեսան եգիպտացի-

ներին, խիստ վախեցան, սկսեցին գանգատուել
Աստծուն և ասել Մովսէսին. «Մի՞թէ Եգիպտո-
սում գերեզմաններ չկային, որ մեզ բերիր այս-
տեղ թաղելու»: Մովսէսը պատասխանեց. «Մի
վախենաք, դուք շուտով կտեսնէք, թէ Աստուած
ինչպէս է ազատելու ձեզ»:

Աստուած ասաց Մովսէսին. «Ա՛ռ գաւազանդ
և խփիր ծովի ջրին»: Երբ Մովսէսը խփեց, ջուրն
խսկոյն երկու կողմից պատի նման կանգնեց.
քամի փչեց. յատակը չորացրեց և իսրայէլացի-
ները միւս ափն անցան: Եգիպտացիները կառ-
քերով և երիվարներով հետևեցին նրանց:

Երբ վերջին իսրայէլացին ծովի միւս ափումն
էր, Աստուած ասաց Մովսէսին. «Գաւազանդ
խփիր ծովի ջրին, որ ջուրը միանայ»: Մովսէսն



այնպէս էլ արաւ և ծովը միացաւ: Եգիպտացիներն սկսեցին փախչել, իսկ Ղուրը ծածկեց փարաւոնի զօրքին— ոչ մէկն էլ կենդանի չմնաց:


Մովսէսն ու իսրայէլացիները սկսեցին երգել և ասել. «Օրհնեցէք Աստծուն, նա փառաւոր գործ կատարեց— փարաւոնին պատժեց, Աստուած մեր օգնականն է և փրկիչը»:

Դ. ԻՍՐԱՅԷԼԱՅԻՆԵՐՆ ԱՆՅՆՈՒՄ ԵՆ ԱՆԱՊԱՏՈՎ

Մովսէսը շարունակեց ճանապարհը Կարմիր ծովից դէպի անապատ՝ երեք օր շարունակ: Վերջապէս հասան Մոռա, որտեղի Ղուրը դառն էր: Ժողովուրդը գանգատուեց Մովսէսին և ասաց. «Ի՞նչ պէտք է խմենք»: Մովսէսն աղօթեց Աստծուն: Աստուած Մովսէսին մի փայտ ցոյց տուաւ. Ղուրը ձգեց և Ղուն իսկոյն քաղցրացաւ:

Այդ տեղից իսրայէլացիները եկան Սին անապատը, ուր նորից գանգատուեցին Մովսէսին և Ահարոնին. «Երանի մենք Եգիպտոսում մեռնէինք. այնտեղ կաթսաներով միս ունէինք և առատ հաց. դուք բերիք մեզ այս անապատ տեղը սովամահ անելու»: Աստուած ասաց Մովսէսին. «Ես երկնքից հաց կթափեմ նրանց համար. ժողովուրդը թնդ ամեն մի օրուայ պաշար ժողովէ, իսկ վեցերորդ օրը՝ երկու անգամ աւելի»:

Մովսէսն ու Ահարոնը յայտնեցին այս բանն իսրայէլացիներին և ասացին. «Երեկոյեան միս կունենաք, իսկ առաւօտեան՝ հաց»: Երեկոյեան դէմ



3215-2004

եկան լորամարգիները և ծածկեցին ամբողջ բանակը, իսկ առաւօտեան գետինը պատած էր ցօ-



այնպէս էլ արաւ և ծովը միացաւ: Եգիպտացիներն սկսեցին փախչել, իսկ շուրը ծածկեց փարաւոնի զօրքին— ոչ մէկն էլ կենդանի չմնաց:


Մովսէսն ու իսրայէլացիները սկսեցին երգել և ասել. «Օրհնեցէ՛ք Աստծուն, նա փառաւոր դործ կատարեց— փարաւոնին պատժեց, Աստուած մեր օգնականն է և փրկիչը»:

Դ. ԻՍՐԱՅԷԼԱՅԻՆԵՐՆ ԱՆՅՆՈՒՄ ԵՆ ԱՆԱՊԱՏՈՎ

Մովսէսը շարունակեց ճանապարհը Կարմիր ծովից դէպի անապատ՝ երեք օր շարունակ: Վերջապէս հասան Մ'նռա, որտեղի շուրը դառն էր: Ժողովուրդը գանգատուեց Մովսէսին և ասաց. «Ի՞նչ պէտք է խմենք»: Մովսէսն աղօթեց Աստծուն: Աստուած Մովսէսին մի փայտ ցոյց տուաւ. շուրը ձգեց և շուրն իսկոյն քաղցրացաւ:


Այդ տեղից իսրայէլացիները եկան Սին աւանաւատը, ուր նորից գանգատուեցին Մովսէսին և Ահարոնին. «Երանի մենք Եգիպտոսում մեռնէինք. այնտեղ կաթսաներով միս ունէինք և առատ հաց. դուք բերիք մեզ այս անապատ տեղը սովամահ անելու»: Աստուած ասաց Մովսէսին. «Ես երկնքից հաց կթափեմ նրանց համար. ժողովուրդը թող ամեն մի օրուայ պաշար ժողովէ, իսկ վեցերորդ օրը՝ երկու անգամ աւելի»:

Մովսէսն ու Ահարոնը յայտնեցին այս բանն իսրայէլացիներին և ասացին. «Երեկոյեան միս կուռնենաք, իսկ առաւօտեան՝ հաց»: Երեկոյեան դէմ



3215-2004

եկան լորամարգիները և ծածկեցին ամբողջ բանակը, իսկ առաւօտեան դեռիւնը պատած էր ցօ-



դով: Երբ ցօղը հեռանում գետնի վրայ մնում էր կլոր և սպիտակ՝ եղեամի նման մի բան: Իսրայելացիները, երբ այս բանը տեսան, հարցնում էին իրար. «Այս ի՞նչ բան է»: Մովսէսն ասաց. «Սա Աստծու ուղարկած հացն է»: Իսրայելացիներն այս հացի անունը մանանայ դրին և առաւօտներն էին հաւաքում: Այսպէս նրանք միշտ մանանայ էին ուտում, քանի որ անապատումն էին *):

Տ. ՍԻՆԱՅԻ ՕՐԷՆՍՏՈՒՈՒԹԻՒՆԸ

Եգիպտոսից դուրս գնալու երրորդ ամսում

*) Մանօթութիւն—առանձնապէս հատիկները. բ.—նոյնը խոշորացրած. գ.—հատիկի ներքին մասը և դ.—հատիկը ծորալիս:

Իսրայելացիները հասան Սինա անապատը և բանակ ձգեցին Սինա լեռան հանգէպ: Մովսէսը լեռը բարձրացաւ: Աստուած ասաց նրան. «Իսրայելացիներին այսպէս կ'ասես—դուք տեսաք, թէ ես եգիպտացիներին ինչ արի. ինչպէս ես ձեզ ազատեցի. եթէ ինձ լսէք, ընտրեալ ժողովուրդս կլինիք բոլոր ազգերի մէջ. դուք քահանաների նման ուսուցիչ պիտի լինիք և բոլոր ազգերին քարոզէք իմ կամքը»: Մովսէսն իջաւ լեռնից և յայտնեց ժողովրդին: Բոլորը միաձայն պատասխանեցին և ասացին. «Աստծու բոլոր պահանջները կկատարենք»: Մովսէսը յայտնեց այս բանն Աստծուն: Աստուած ասաց նրան. «Ուրեմն գնա ժողովրդի մօտ և պատուիրիր, որ լուացուեն, մաքրուեն և երրորդ օրը մաքուր շորերով ինձ մօտ բեր»:

Վերջապէս հասաւ երրորդ օրը: Առաւօտեան վաղ՝ լեռն սկսաւ որոտալ և կայծակել. մութ ամպերը ծածկեցին սարի գլուխը և փողի ձայն էր լսում: Մովսէսը ժողովրդին բանակից դուրս հանեց ու տարաւ լեռան մօտ: Սինա լեռն ամբողջապէս ծխի մէջ կորած էր—կրակի բոցեր էին բարձրանում և շարժւում էր, փողի ձայնը հետզհետէ սաստկանում էր:

Հէնց այդ ժամանակ Աստուած սկսաւ խօսել ժողովրդի հետ և ասել.

ա. 1. Ես եւ քո տէր Աստուածը—բացի ինձանից ուրիշ Աստուած չունենաս:

բ. 2. Կողք չշինես ու երկրպագութիւն չտաս նրան:

ա.	ե.
բ.	զ.
գ.	է.
դ.	ը.
է.	թ.
զ.	ժ.

գ. 3. Զո Աստծու անունով սուտ մի' նրդուիր:

դ. 4. Շաքաթ օրը սո'ւրք պահիր:

ե. 5. Պատուի'ր քո հօրն ու մօրը, որ երկար կեանք ունենաս:

զ. 6. Մի' սպանիր:

է. 7. Մի' շնար:

ը. 8. Մի' գողանար:

թ. 9. Զո ընկերոջ մասին սուտ վկայութիւն մի' տար:

ժ. 10. Մի' ցանկանար քո ընկերոջ տանը, արտին, եզանը, էշին եւ ինչ որ նրանն է:


Ժողովուրդը հեռացաւ, իսկ Մովսէսը նորից լեռը բարձրացաւ: Նա ափսոսելով 40 օր մնաց և այդ ժամանակ ուրիշ շատ պատուէրներ ստացաւ Աստծուց ժողովուրդին յայտնելու:

Երբ Աստուած իւր խօսակցութիւնը վերջացրեց Մովսէսի հետ, երկու քարէ տախտակներ տուաւ նրան, որի վրայ ինքն էր գրել տաւր գլխաւոր պատուիրանները:

9. Ո Ս Կ Է Հ Ո Ր Թ Ը

Իսրայէլացիները մէջ կային երկչոտներ և օրէնք չսիրող մարդիկ, որոնք չէին ուզում Քանան գնալ, պատերազմել և նոր հայրենիք ստանալ: Սրանք երբ տեսան, որ Մովսէսն ուշացաւ, եկան Ահարոնի մօտ և ասացին. «Շինիր մեզ համար աստուածներ, որոնք մեզ առաջնորդեն. Մովսէսը չգիտես ինչ եղաւ»: Ահարոնը պատասխանեց. «Բերէք ինձ ձեր կանանց և աղջրկանց ոսկէ գնդերը»: Նրանք էլ բերին: Ահարոնը մի ոսկէ հորթ ձուլեց նրանցից: Նոր Աստուած ցանկացողները երբ տեսան, որ իրանց կամքը կատարուեց, ժողովրդին ասացին. «Ահա ձեր Աստուածը, որ ձեզ եգիպտոսից հանեց»: Ահարոնն էլ սեղան շինեց և ասաց. «Վաղը Աստծու տօնն է»: Առաւօտեան վաղ՝ ժողովուրդը ողջակէզ արաւ և սկսեց ուտել, խմել ու պարել ոսկէ հորթի շորս կողմը:

Հէնց այդ ժամանակ Մովսէսն իջաւ լեռնից՝ ձեռին բռնած երկու քարէ տախտակները: Երբ բանակին մօտեցաւ, տեսաւ ոսկէ հորթը և պարաւորներին, բարկացաւ, տախտակները ձեռից վայր ձգեց և կոտորտեց: Ետոյ նրանց շինած ոսկէ հորթը այրել տուաւ. փոշի դարձրեց. ջրի մէջ ածեց և իրանց խմացրեց: Ապա Ահարոնին դարձաւ և ասաց. «Այս ժողովուրդը քեզ ինչ




արեց, որ այսպիսի յանցանքի մէջ ձգեցիր»: Ետոյ ժողովրդին յանդիմանեց և ասաց. «Ճշմարիտ Աստծուն պաշտողները թո՛ղ ինձ մօտ գան»: Ղևիի բոլոր որդիքը նրա մօտ հաւաքուեցան: Մովսէսն ասաց. «Հանէք ձեր սրերը, անցէք բանակի մի ծայրից միւսը և սպանեցէք կոռօք պաշ-

տողներին»: Ղևիի որդիքը կատարեցին Մովսէսի հրամանը: Այդ օրը երեք հազար մարդ սպանւեց:

Առաւօտը Մովսէսն ասաց ժողովրդին. «Դուք մեծ յանցանք էք գործել. ես լեառը կբարձրանամ, Աստծուն կխնդրեմ, որ ձեր յանցանքը ներէ»: Մովսէսն ասաց Աստծուն. «Ժողովուրդը մեծ յանցանք է գործել. ներիր, իսկ եթէ չես ների, այն ժամանակ իմ անունն էլ քո ցուցակից ջնջիր»: Աստուած ասաց Մովսէսին. «Յանցաւորների անունները կջնջեմ, իսկ դու գնա և առաջնորդիր նրանց»: Աստուած ասաց Մովսէսին. «Երկու քարէ տախտակներ բեր, որ առաջին տախտակների պատգամները նորից գրեմ»: Մովսէսը կատարեց Աստծու պատուէրը: Աստուած նորից գրեց պատգամները:

Այդ պատուիրանները կոչւում են տասնաքանեայ պատգամներ, որոնց պահում էին մի ոսկէզօծ արկղի մէջ, որ կոչւում էր Ուխտի տապանակ:



Ուխտի տապանակ

10. Լ Ր Տ Ե Ս Ն Ե Ր

Իսրայէլացիները մի ամբողջ տարի մնացին Սինա լեռան մօտ: Դրանից ետոյ չուեցին դէպի Փառան անապատը, որ հեռի չէ Քանանից: Այստեղ Աստուած խօսեց Մովսէսի հետ և ասաց. «Իւրաքանչիւր ցեղից մի մարդ ուղարկիր Զնանացւոց աշխարհը, որ լրտեսեն»: Մովսէսը տասներկու մարդ ընտրեց՝ ամեն ցեղից մի մի հատ ու Քանան ուղարկեց: Դրանց մէջն էր և Յետու անունով մի քաջ մարդ: Մովսէսը պատուիրեց նրանց և ասաց. «Գնացէք և տեսէք թէ ինչպիսի երկիր է Քանանը. ուրբեր են նրա բնակիչները. զօրեղ թէ՞ թոյլ մարդիկ են. բազմամարդ է երկիրը՝ թէ՞ սակաւամարդ. հաստատուն և ամուր քաղաքներում են ապրում՝ թէ վրանների տակ. երկիրը պտղաւէտ է՝ թէ ոչ: Վերադառնալիս երկրի պտուղներից հետներդ բերէք»:

Սրանք գնացին և լրտեսեցին ամբողջ երկիրը: Եւ դարձան Քեբրոն քաղաքը, ուր մի հատ ուրթ կտրեցին ողկուղով և երկու մարդիկ լծակով հետները բերին: Ուրիշ պտուղներ ևս վեր առան հետները: Քառասուն օրից ետոյ վերադարձան Փառան և ցոյց տուին բերած պտուղները: Լրտեսողներն ասում էին. «Մենք գնացինք այն երկիրը, ուր մեղր ու կաթն է ըղխում. բնակիչները զօրեղ մարդիկ են. քաղաքներն աս-


մուր են և մեծ»: Յետուն և Զաղսըր ասում էին. «Մենք կարող ենք Քանանը նուաճել», իսկ միւսները հակառակում էին և ասում. «Ձենք կարող նրանց հետ կռուել, նրանք մեզնից շատ զօրեղ են: Քանանում այնպիսի հսկայ մարդիկ տեսանք, որ մենք մորեխ էինք երևում նրանց առաջ»:

Ժողովուրդը ոտքի կանգնեց, սկսաւ աղաղակել և լաց լինել: Կրկին տրտնջացին Ահարոնից, Մովսէսից ու ասացին. «Երանի՜ Նզիպտոսում մեռած լինէինք: Ընտրենք առաջնորդներ և յետ դառնանք»: Ժողովուրդը քիչ մնաց որ քարկոծէր երկուսին էլ:

Այս բանից ետոյ Աստուած ասաց Մովսէսին. «Մինչև երբ պէտք է այս ժողովուրդն ինձ բարկացնէ և իմ հրաշքներին չհաւատայ. ես կը պատժեմ դրանց. նրանցից ոչ մինը չպիտի տեսնէ Խոստացեալ երկիրը. նրանց ոսկորները պիտի փտեն անապատում. քսան տարեկանից մեծը չի մտնի Քանան, միւսները քառասուն տարի այնտեղ հովիւներ պիտի լինին: Առաւօտեան վերադարձէք Կարմիր ծովի անապատը»: Մովսէսն այս բոլորը յայտնեց իսրայէլացիներին: Ժողովուրդը լաց էր լինում: Նրանք դարձան Անապատ:

Այստեղ իսրայէլացիները 38 տարի մնացին և մեծ նեղութիւն էին կրում—անապատում թունաւոր օձեր կային, խայթում էին և մահաց-

նում: Ժողովուրդը գանգատուեց Մովսէսին և խնդրեց որ ազատէ օձերից: Մովսէսն էլ Աստուծու հրամանով մի պղնձէ օձ շինել տուաւ, բարձ-



րացրեց խաչաձև ձողի վրայ և ասաց. «Ումն օձը
Կիսայթէ, թող նայէ պղնձէ օձին, իսկոյն կբժըշ-


իւրի»: Ուայթուողներն էլ այդպէս անում էին և բժշկւում:

11. Մ Ո Վ Ս Է Ս Ի Մ Ա Հ Ը

Երբ քառասուն տարին անցաւ, իսրայէլացիները նորից գնացին դէպի Սուստացեալ երկրի սահմանները: Այնտեղ Աստուած խօսեց Մովսէսի հետ և ասաց. «Բարձրացիր Նաքաւ լեռու և տես Քանանացւոց երկիրը, իսկ տեսնելուց ետոյ՝ պիտի մեռնես»: Մովսէսը պատասխանեց. «Տէր, Ժողովրդի վրայ մի առաջնորդ նշանակիր»: Աստուած պատասխանեց. «Վեր առ Նաւեայի որդի Յեսուին, տար Ժողովրդի մօտ և կանգնացրու Ահարոնի որդի Նդիազար քահանայապետի առաջ. դիր քո ձեռք նրա գլխին և տուր նրան քո իշխանութիւնը և զօրութիւնը»:

Մովսէսը կանչեց Ժողովրդին և Աստծու պատուէրները յայտնեց նրանց: Նա ասաց. «Ես արդէն հարիւր քսան տարեկան ծերունի եմ. ձեզ այլևս առաջնորդել չեմ կարող. Աստուած ասաց ինձ, որ ես Քանան չպիտի մտնեմ: Բայց մի վախենաք. Աստուած ինքը կառաջնորդէ. նա ձեզ չի մոռանայ. Յեսու Նաւեան կառաջնորդէ և կանցնէ ձեզ հետ Յորդանանը»:

Ետոյ Մովսէսը դարձաւ Յեսուին և Ժողո-



վրդեան ներկայութեամբ ասաց. «Քաջացիր և զօրացիր, դու պէտք է նուաճես Քանանը և բաժանես երկիրը նրանց մէջ»:

Սրանից ետոյ Մովսէսը Նաբաւ լեառը բարձրացաւ: Աստուած ցոյց տուաւ նրան Քանանը: Ետոյ Աստուծո ծառայ Մովսէսը մեռաւ Մուլա-

ռացտոյ երկրում. նրա գերեզմանի տեղը ոչ ոք չգիտէ մինչև այժմս էլ: Իսրայէլացիները Մովսէսի վրայ երեսուն օր սուգ արին:

Բ. ՅԵՍՈՒ

12. ՅԵՍՈՒՆ ՆՈՒԱՃՈՒՄ Է ՔԱՆԱՆԸ

ա. Մովսէսի մահուանից ետոյ Աստուած ասաց Յեսուին. «Իմ ծառայ Մովսէսը մեռաւ, վեր կաց, անցիր Յորդանանը: Ինչպէս որ Մովսէսի հետն եմ եղել, այնպէս էլ քեզ հետ կլինեմ: Զօրացիր և քաջացիր. իմ պատուիրանները չմոռանաս»:

Յեսուն էլ պատուիրեց ցեղապետներին և ասաց: «Ժողովրդին ասացէք, որ պաշար պատրաստեն, երեք օրից ետոյ պէտք է անցնենք Յորդանանը»: Յեսուն ծածուկ երկու մարդիկ էլ ուղարկեց Նրիբովը լրտեսելու: Նրանք վերադարձան և յայտնեցին՝ թէ Քանանը և թէ Երիբովը կարող են նուաճել:

Սրանից ետոյ Յեսուն ասաց քահանաներին. «Առէք տապանակ ուխտին և անցէք ժողովրդի առաջով»: Քահանաներն առաջ անցան, իսկ ժողովուրդը հետևում էր նրանց: Նրանք անցան Յորդանանը և եկան մինչև Երիբով:



Քահանայ

աղաղակ բարձրացրէք—այս աղաղակի ժամանակ քաղաքի պարիսպները կկործանուեն»:

Յեսուն այդպէս էլ արաւ: Քաղաքի պարիսպները կործանուեցան. ժողովուրդը ներս մտաւ. աւերեց և կոտորեց բոլորը՝ թէ մարդ և թէ կենդանի, իսկ մնացածը կրակ տուին, այրեցին:

բ. Երեքովի զոհները կողպած էին: Աստուած ասաց Յեսունին. «Ահա քաղաքը քեզ եմ յանձնում, պատուիրիր զինուորներին, որ վեց օր շարունակ, օրը մի անգամ, քաղաքի շուրջը պտտեն: Եօթներորդ օրը հրամայիր քահանաներին փողերը փչելով տապանակի առջևից գնան և եօթըն անգամ պտտեն քաղաքի շուրջը, իսկ դուք վերջին անգամ փողի ձայնը լսելուն պէս՝

դ. Յեսուն երեսուն և մէկ թագաւորի և յաղթեց, նրանց երկիրները նուաճեց ու բաժանեց իսրայէլի 12 ցեղի մէջ՝ իւրաքանչիւրին իւր բաժինը տալով: Տապանակ ուխտին բերին Սելով քաղաքը և զրին վկայութեան խորանի մէջ:


Այսպէս ժողովուրդը նուաճեց Քանանը: Այն երկիրը, որ Աստուած խոստացել էր նրանց, ստացան:

Յեսուն մեռաւ հարիւր տասն տարեկան հասկում: Յովսէփի ոսկորները թաղեցին Սիւքեմ քաղաքում:

Գ. ԴԱՏԱԻՈՐՆԵՐ

13. ԳԵԴԵՈՆԸ ՈՐՊԷՍ ԻՍՐԱՅԷԼԻ ԴԱՏԱԻՈՐ


ա. Յեսուն մեռաւ: Մեռել էին և նրա ժամանակակից մարդիկը: Իսրայէլացիներն սկսեցին ամուսնանալ հեթանոս աղջկանց հետ և իրանց աղջիկներն էլ նրանց կնութեան տալ: Կրկին մոռացան ճշմարիտ Աստծուն և սկսեցին կուռքեր պաշտել: Աստուած պատժեց նրանց՝ մատնելով եօթը տարի մաղիամացուոց ձեռք: Ինչ որ իսրայէլացիները ցանում էին, մաղիամացիները հնձի ժամանակ գալիս էին, յափշտակում և ոչըն-




Վկայութեան խորանը

I. Գաւիթ, II. Սրբութիւն, III. Սրբութիւն Սրբոց:


ա, Զոհի սեղան, բ, Աւաղան:



1. Աւաղան 2. Զոհի սեղան



4. Խնկոց



5. Խնկոց 6. Առաջաւորաց սեղան

չացնում: Իսրայէլացիները, երբ յաջողութեան մէջ էին, մոռանում էին Աստծուն, իսկ երբ անյաջողութեան էին պատահում, յիշում էին նրան, այս պատճառով յիշեցին Աստծուն և օգնութիւն խնդրեցին նրանից:

Աստուած էլ երեաց Գեղէոնին որ Մանասէի ցեղիցն էր ու ասաց. «Գնա, ազատիր իսրայէլացիներին»: Գեղէոնը պատասխանեց. «Ինչպէս ազատեմ նրանց. ես Մանասէի ցեղի մէջ շատ քիչ բարեկամներ ունիմ, բացի զբանից մեր տանը ես ամենից փոքրն եմ»: Աստուած ասաց նրան. «Ես քեզ կօգնեմ—կործանիր Բահաղի սեղանը, կտրիր նրա շուրջը գտնուող անտառը և Նեովայի համար սեղան շինիր»:

Գեղէոնը հետն առաւ իւր ծառաներից տասն հոգի և գիշերով կատարեց Աստծու հրամանը: Առաւօտը՝ երբ քաղաքի բնակիչները զարթեցին, տեսան, որ Բահաղի սեղանը կործանուել է, իսկ անտառը կտրուած է և մի ողջակէզ զրած Նեովայի սեղանի առաջ: Սկսեցին միմեանց նայել և ասել. «Անշուշտ Յովասի որդի Գեղէոնն աւրած կլինի այս»:

Քաղաքացիները Յովասի մօտ եկան և ասացին. «Դուքս բեր քո որդուն. նա պէտք է մեռնի, որովհետեւ Բահաղի սեղանը կործանել է»: Իսկ Յովասն ասաց. «Դուք կամենում էք Բահաղի փոխարէն դատաւոր լինել. եթէ նա աս-

տուած է, թող ինքն իրեն պաշտպանէ և վրէժխնդիր լինի իւր սեղանը կործանողից»:

Բ. Սրանից ետոյ Գեղէոնը հրամայեց իսրայէլի միւս ցեղերին, որ իւր մօտ ժողովուհն: Անթիւ զէնք կրող մարդիկ հաւաքուեցան Գեղէոնի մօտ և նա առաջնորդեց նրանց զէպի մազիւհամացիները: Աստուած ասաց Գեղէոնին. «Քո հետ եղած ժողովուրդը շատ շատ է, թերեւ իսրայէլացիները պարծենան և ասեն՝ մենք ազատեցինք մեզ, երկչոտներին հեռացրո՛ւ»: Քսան երկու հազար հոգի ետ դարձան, մնաց տասն հազար հոգի միայն: Աստուած կրկին անգամ ասաց Գեղէոնին. «Դարձեալ շատ է զօրքդ, երեք հարիւր մարդ բաւական է»: Գեղէոնը կատարեց Աստծու հրամանը: Մազիւհամացիների բանակը հովտի մէջն էր, իսկ իսրայէլացիներինը՝ բարձրում:

Կէս գիշերին Գեղէոնը երեք հարիւր հոգին երեք մասի բաժանեց, իւրաքանչիւրին մի հատ եղջիւրէ փող և մի հատ վառած սափոր տուաւ ու ասաց. «Ինձ նայեցէք, ինչ որ ես անեմ» նոյնն էլ դուք արէք»:

Գեղէոնը գիշերով մազիւհամացիների բանակը մտաւ և հրամայեց փողերը փչել ու սափորները կոտրատել: Այդպէս էլ արին ու սկսեցին աղաղակել. «Ահա Աստծու և Գեղէոնի սուրը»: Մազիւհամացիների զօրքը զարհուրեց—կարծեցին թէ

խորայելացիները բազմաթիւ են, ուստի սկսեցին փախչել: Իսրայելացիները հետևեցին նրանց և կոտորեցին:

Այս յաղթութիւնից ետոյ իսրայելացիներից ոմանք ասացին Գեղէոնին. «Մեզ վրայ իշխան եղիր՝ դու, քո որդին և քո որդու որդին»: Գեղէոնը մերժեց և ասաց. «Ո՛չ ես և ո՛չ իմ որդին, այլ Աստուած է ձեր իշխանը»: Գեղէոնը դարձաւ դատաւոր և քառասուն տարի շարունակ երկիրը նրա կենդանութեան ժամանակ խաղաղ էր:

14. Ս Ա Մ Փ Ս Ո Ն

ա. Իսրայելացիները նորից հեռացան Ասոր-
ծուց և սկսեցին Բահաղին պաշտել, այս պատ-
ճառով էլ Աստուած նորից պատժեց նրանց և
մատնեց այս անգամ փղշտացիների ձեռք: Գրա-
նից ետոյ Աստուած Սամփսոն անունով մէկին
դատաւոր ընտրեց: Սա փղշտացուց երկիրը գնաց,
որ այնտեղի աղջիկներից իրա համար մի կին
ընտրէ: Երբ նրանց այգիներին հասաւ, մի երի-
տասարդ առիւծ նրա առաջը դուրս եկաւ: Սամփ-
սոնն այս գազանի վրայ յարձակուեց և բերանը
ձեղքեց: Մի ուրիշ անգամ, երբ նոյն ճանապարհ-
ով անցնում էր, կամեցաւ առիւծի գէշը տես-

նել և գտաւ նրա բերանի մէջ մի գունդ մեղու
և մեղր:

Սամփսոնը փղշտացիներից մի աղջիկ ընտ-



րեց ու հարսանիք արաւ: Երեսուն փղշտացի ե-
րիտասարդ հիւր էին հարսանիքին: Սամփսոնն
ասաց. «Ես ձեզ մի հանելուկ կասեմ, եթէ մին-
չև հարսանեաց եօթներորդ օրը լուծէք, երեսուն

ձեռք զգեստ կստանաք, իսկ եթէ չկարողանաք, գուր տուէք ինձ նոյնքան զգեստ»։ Համաձայնեցան և նա պատմեց։ Հանելուկն այս էր — «Ուտողից ուտելիք դուրս նկաւ իսկ հօգորից՝ քաղցր»։ Նրանք չէին կարողանում գտնել այս հանելուկը, գնացին Սամփսոնի կնոջ մօտ և ասացին. «Պաբիր քո մարդուն և այս հանելուկի միտքն իմացիր, իսկ եթէ չես անի, մենք քեզ էլ, քո հօր տունն էլ կայրենք»։ Կինն այնքան խնդրեց և լաց եղաւ՝ մինչև որ մարդը յայտնեց գաղտնիքը և նա էլ իւր հայրենակից երիտասարդներին պատմեց։ Եօթներորդ օրը փղշտացիներն ասացին Սամփսոնին. «Ի՞նչ կայ մեզրից քաղցր և առիւծից հօր»։ Սամփսոնը պատասխանեց. «Եթէ գուր իմ կնոջը չստիպէիք, չէիք կարող իմանալ»։

Սամփսոնը գնաց փղշտացիներին մի ուրիշ քաղաք. երեսուն մարդ սպանեց, զգեստները բերեց և տուաւ հանելուկը լուծողներին, իսկ ինքը վերադարձաւ Յուդայի երկիրը։ Այն ժամանակ Սամփսոնի աները նրա կնոջն ամուսնացրեց ուրիշի հետ։ Երբ Սամփսոնը իւր կնոջ մօտ վերադարձաւ և այս բանն իմացաւ՝ բարկացաւ, կամեցաւ պատժել բոլոր փղշտացիներին — երեք հարիւր աղուէս բռնեց. զոյգ-զոյգ ազիններից կապեց. ազինների մէջ վառած ջահ դրաւ. արձակեց փղշտացիների ցորենի արտերի մէջ և այրեց նրանց այգիները, ձիթենու ծառերն ու արտերը։

Այս բանի համար եկան փղշտացիները և Սամփսոնի աներոջն ու կնոջը միասին այրեցին։

Սամփսոնին բռնելու համար փղշտացիները յարձակուեցան Յուդայի երկրի վրայ և ստիպեցին իսրայէլացիներին Սամփսոնին կապած իրանց յանձնել։ Բայց Սամփսոնը իւր կամքով թոյլ տուաւ հայրենակիցներին, որ կապեն իրան և թշնամու ձեռք մատնեն։ Երբ փղշտացիները տեսան նրան, սկսեցին ուրախանալ։ Սամփսոնը կրտսերացի կապանքը բարակ թելի նման, գտաւ մի սատկած իշի ծնօտ և նրանով հազար մարդ սպանեց։

բ. Փղշտացի իշխաններն եկան Սամփսոնի կնոջ մօտ և ասացին. «Եթէ քո մարդուն մեր ձեռք մատնես, ամեն մէկս կտանք քեզ հազար և հարիւր արծաթ»։ Երբ Սամփսոնը քնեց, կինը փղշտացիներին իւր մօտ կանչեց։ Նրանք բռնեցին Սամփսոնին. երկաթէ շղթաներով կապեցին. աչքերը բրեցին. Գազա քաղաքը տարան և բանտ դրին՝ որտեղ նա աղում էր։

Սրանից ետոյ փղշտացիները հաւաքուեցան Դահուն կուռքին զոհ մատուցանելու, որ թշնամուն իրանց ձեռն է մատնել։ Սամփսոնին էլ բանտից դուրս բերին, ծաղրելու համար ստիպեցին որ իրանց առաջը պար գայ և կանգնացրին տան երկու սիւնների մէջ տեղում։ Տունը ձիւքն էր բազմութիւնով, իսկ տանիքի վրայ մօտ

ձեռք զգեստ կատանաք, իսկ եթէ չկարողանաք, զուք տուէք ինձ նոյնքան զգեստ»։ Համաձայնեցան և նա պատմեց։ Հանելուկն այս էր — «Ուտողից ուտելիք դուրս նկաւ իսկ հօգօրից՝ քաղցր»։ Նրանք չէին կարողանում գտնել այս հանելուկը, գնացին Սամփսոնի կնոջ մօտ և ասացին. «Խաբիր քո մարդուն և այս հանելուկի միտքն իմացիր, իսկ եթէ չես անի, մենք քեզ էլ, քո հօր տունն էլ կայրենք»։ Կինն այնքան խնդրեց և լաց եղաւ՝ մինչև որ մարդը յայտնեց գաղտնիքը և նա էլ իւր հայրենակից երիտասարդներին պատմեց։ Եօթներորդ օրը փղշտացիներն ասացին Սամփսոնին. «Ի՞նչ կայ մեղրից քաղցը և առիւծից հօրը»։ Սամփսոնը պատասխանեց. «Եթէ զուք իմ կնոջը չստիպէիք, չէիք կարող իմանալ»։

Սամփսոնը գնաց փղշտացիների մի ուրիշ քաղաք. երեսուն մարդ սպանեց, զգեստները բերեց և տուաւ հանելուկը լուծողներին, իսկ ինքը վերադարձաւ Յուդայի երկիրը։ Այն ժամանակ Սամփսոնի աները նրա կնոջն ամուսնացրեց ուրիշի հետ։ Երբ Սամփսոնը իւր կնոջ մօտ վերադարձաւ և այս բանն իմացաւ՝ բարկացաւ, կամեցաւ պատժել բոլոր փղշտացիներին — երեք հարիւր աղուէս բռնեց, զոյգ-զոյգ ագիներից կապեց. ագիների մէջ վառած ջահ դրաւ. արձակեց փղշտացիների ցորենի արտերի մէջ և այրեց նրանց այգիները, ձիթենու ծառերն ու արտերը։

Այս բանի համար եկան փղշտացիները և Սամփսոնի աներոջն ու կնոջը միասին այրեցին։

Սամփսոնին բռնելու համար փղշտացիները յարձակուեցան Յուդայի երկրի վրայ և ստիպեցին խրայելացիներին Սամփսոնին կապած իրանց յանձնել։ Բայց Սամփսոնը իւր կամքով թոյլ տուաւ հայրենակիցներին, որ կապեն իրան և թշնամու ձեռք մատնեն։ Երբ փղշտացիները տեսան նրան, սկսեցին ուրախանալ։ Սամփսոնը կրտստեց կապանքը բարակ թելի նման, գտաւ մի սատկած իշի ծնօտ և նրանով հազար մարդ սպանեց։

բ. Փղշտացի իշխաններն եկան Սամփսոնի կնոջ մօտ և ասացին. «Եթէ քո մարդուն մեր ձեռք մատնես, ամեն մէկս կտանք քեզ հազար և հարիւր արծաթ»։ Երբ Սամփսոնը քնեց, կինը փղշտացիներին իւր մօտ կանչեց։ Նրանք բռնեցին Սամփսոնին. երկաթէ շղթաներով կապեցին. աչքերը բրեցին. Գազա քաղաքը տարան և բանտ դրին՝ որտեղ նա աղում էր։

Սրանից ետոյ փղշտացիները հաւաքուեցան Դահուն կուռքին զոհ մատուցանելու, որ թշնամուն իրանց ձեռն է մատնել։ Սամփսոնին էլ բանտից դուրս բերին, ծաղրելու համար ստիպեցին որ իրանց առաջը պար գայ և կանգնացրին տան երկու սիւնների մէջ տեղում։ Տունը լիքն էր բազմութիւնով, իսկ տանիքի վրայ մօտ

երեք հազար հոգի էին կանգնած: Սամփոնը յանկարծ բռնեց երկու սիւներից և աղաղակեց. «Թող ես էլ այս ալլաղգիների հետ մեռնեմ»: Այս ասաց և ինչքան ոյժ ունէր, շարժեց երկու սիւները և տունը քանդեց ուրախացողների գլխին:

Սամփոնը 20 տարի դատաւոր եղաւ:

15. ՀԵՂԻ ԵՒ ՍԱՄՈՒԷԼ

ա. Հեղիի քահանայապետութեան ժամանակ մի մարդ էր ապրում Նղիւնա անունով իւր կին Աննայի հետ: Նրանք անգաւակ էին, ամեն տարի Սելով քաղաքը ուխտ էին գնում և Աստծուն զոհ մատուցանում: Մի անգամ Սելով գնալիս՝ Աննան խիստ տրամեց, լաց եղաւ. աղօթեց և ասաց. «Տէր Սաքաւով, դու գիտես իմ նեղութիւնը, եթէ ինձ մի որդի պարգևես, նրան քեզ կնուիրեմ, որ մինչև իւր մահը քեզ ծառայէ»:

Հեղին նստած էր Վկայութեան խորանի դռան առաջ և ուշադիր լսում էր Աննային: Եւ որովհետեւ նրա աղօթքը երկար տևեց, Հեղին ասաց. «Աննա, քանի՞ աղօթես»: Աննան պատասխանեց. «Ես մի վշտացած կին եմ, սիրտս Աստծու առաջ բաց եմ անում»: Հեղին ասաց. «Իս-



րայելի Աստուածը քո խնդիրը կկատարէ»: Աննան վերադարձաւ տուն: Նրա սիրտն այլ ևս այնպէս տխուր չէր:

Աստուած լսեց Աննայի աղօթքը և նրան մի արու գաւակ պարգևեց, որին անուանեցին Սամուէլ, որ նշանակում է Աստծուց խնդրած. — Աստուածատուր: Երբ մանուկը մի քանի տարեկան դարձաւ, մայրը Սելով բերեց Հեղիի մօտ և ասաց. «Տէր, ես այն կինն եմ, որ քեզ մօտ ա-

զօթում էի այս մանկան համար: Աստուած լսեց աղօթքս, ուստի և նրան եմ ընծայում իւր տուածը, ինչպէս խոստացել եմ»: Աննան շնորհակալութիւն արաւ Աստծուն, ինքը տուն դարձաւ, իսկ Սամուէլը մնաց Հեղիի մօտ Տիրոջը ծառայելու:

բ. Հեղիի որդիքը շատ վատ քահանաներ էին — խլում էին իսրայէլացի ուխտաւորներից զոհի մեծ մասը: Փոխանակ էրին և մորթին ստանալու, ինչպէս Մովսէսն էր պատուիրել, կաթսայի միջից շոկում էին եփած զոհի լաւ կտորները և տանում էին: Ծերունի Հեղին զիտէր այս բանը — նա յաճախ խրատում էր նրանց այգալիսի տըզեղ բաներ չանել, բայց չէին լսում: Մանուկ Սամուէլը բարի էր, նա աճում և զօրանում էր: Նրան սիրում էին և՛ Աստուած և՛ մարդիկ:

Մի անգամ, երբ Սամուէլը վկայութեան խորանի առաջ քնած էր, ձայն լսուեց, որ աւսում էր. «Սամուէլ, Սամուէլ»: Սամուէլն վազեց Հեղիի մօտ և ասաց. «Այստեղ եմ, ի՞նչու կանչեցիր ինձ»: Հեղին ասաց. «Ես քեզ չեմ կանչել, դարձիր և քնիր»: Աստուած Սամուէլին երկրորդ, երրորդ անգամ կանչեց: Սամուէլը կրկին անգամ գնաց Հեղիի մօտ: Հեղին հասկացաւ, որ նրան կանչողը Աստուած է, ուստի ասաց. «Դարձիր և քնիր, եթէ մի անգամ էլ ձայն չսես, ասա՝ Տէր, քո ծառան լսում է քեզ»: Սա-



մուէլը դարձաւ իւր տեղը: Աստուած նորից ձայն տուաւ. «Սամուէլ, Սամուէլ»: Սամուէլը պատասխանեց. «Ասա, Տէր, քո ծառան լսում է քեզ»: Աստուած ասաց. «Ես կամենում եմ Հեղիին և իւր որդւոց պատժել»: Սամուէլը վախենում էր այս բանը Հեղիին յայտնելու:

Այն ժամանակ Հեղին կանչեց և ասաց. «Աստուած ի՞նչ ասաց քեզ, մի՛ ծածկիր ինձնից»: Սամուէլը պատմեց նրան ամեն բան: Հեղին ասաց. «Ինչ որ բարի է, թող այն կատարէ Աստուած»:

դ. Իսրայէլացիները պատերազմ ունեցան փրշտացիների հետ և յաղթուեցան: Իսրայէլի ծերերն ասացին. «Ուստի տապանակը բերենք Սեյդից, որ մեզ ազատէ թշնամուց» և բերել տուին: Տապանակի հետ եկան և Հեղիի երկու որդիքը: Երբ տապանակը բանակ բերին, իսրայէ-

լացիները պատերազմ ունեցան փրշտացիների հետ և յաղթուեցան: Իսրայէլի ծերերն ասացին. «Ուստի տապանակը բերենք Սեյդից, որ մեզ ազատէ թշնամուց» և բերել տուին: Տապանակի հետ եկան և Հեղիի երկու որդիքը: Երբ տապանակը բանակ բերին, իսրայէ-

լացիներն ուրախութիւնից աղաղակում էին, իսկ փղշտացիները ասում էին միմեանց. «Իսրայէլի Աստուածը բանակ է եկել, ով փղշտացիներ, քաջ պատերազմեցէք, որ ծառայ չլինիք նրանց»: Իսրայէլացիները յաղթուեցան: Հեղիի երկու որդիներն էլ սպանուեցան, իսկ տապանակը գերի ընկաւ:

Պատերազմի դաշտից մինը շորերը պատռելով, գլխին հող ցանելով եկաւ Սելով: Հեղին Վկայութեան խորանի առաջ աթոռի վրայ նստած էր: Նա հարց փորձ արաւ եկող մարդուց բանակի մասին: Եկողը պատմեց. «Իսրայէլը յաղթուեց. քո երկու որդիներն սպանուեցան և Ուխտի տապանակն էլ գերի ընկաւ»: Այս գուժը լսելուն պէս՝ Հեղին աթոռից վայր ընկաւ, մէջքը կոտրեց և մեռաւ:

Դ Սրանից ետոյ Հեղիի փոխարէն Սամուէլն սկսաւ քարոզել իսրայէլացիներին: Ժողովուրդը խոստովանեց, որ նա Աստծու ճշմարիտ մարդարէն է, ուստի նրան դատաւոր և քահանայապետ ընտրեց: Սամուէլը հաւաքեց բոլոր իսրայէլացիներին և ասաց. «Եթէ դուք սրտանց դառնաք դէպի ճշմարիտ Աստուածը, թողնէք կուռքերը, այն ժամանակ միայն Աստուած կազատէ ձեզ փղշտացիներից»: Իսրայէլացիները լսեցին Սամուէլին և հեռացան օտար աստուածներից:

Երբ փղշտացիները Սամուէլի դատաւոր լի-

նեին իմացան, նորից եկան պատերազմելու: Թըշ-նամին յաղթուեց և Սամուէլի կենդանութեան ժամանակ երբէք չվստահացան Իսրայէլի դէմ գէնք բարձրացնել:

Բ.

16. ՈՐՈՄԻ ԱՌԱԿԸ

Մի մարդ իւր արտումը բարի սերմ ցանել տուաւ: Իսկ նրա թշնամին գիշերով եկաւ և ծածուկ արտի մէջ որոմ ևս ցանեց ու գնաց: Երբ ցորէնը կանաչեց, որոմներն էլ հետը բուսան:

Ծառաներն այս բանը նկատեցին, զարմացան և եկան տիրոջը յայտնելու՝ ասելով. «Տէր, դու քո արտումը չէ՞ որ բարի սերմ ցանեցիր, որոմները սրտեղից են»: Տէրը իսկոյն իմացաւ այդ բանը, ուստի պատասխանեց և ասաց. «Պա իմ թշնամին է արել»: Ծառներն ասացին. «Եթէ այդպէս է, իրաւունք տուր մեզ, որ գնանք և որոմներն արմատից հանենք»: Իմաստուն տէրը պատասխանեց. «Ո՛չ, որոմները հանելիս՝ ցոյցէնն էլ հետը դուրս կգայ, թողէք միասին մեծանան մինչև հունձը, իսկ հնձի ժամանակ կառնեմ հնձուորներին—որոմներն առանձին հնձեցէք

և խուրձ կապեցէք այրելու համար, իսկ ցորէնը ժողովեցէք իմ շտեմարանի մէջ»:

Փոքրիկ մանուկներ, ձեր ծնողները, ուսուցիչները և ձեզ սիրող բարի մարդիկը ձեր սրբաբնույթ բարի սերմեր են ցանում, բայց կան և վատ տղաներ, որոնք ձեզ խաբուում են և չար սերմեր՝ որոմներ են ցանում ձեր մէջ: Զգուշացէք այդ վատ տղաներից:

17. ԱՆՄԻՏ ՀԱՐՍՏԻ ԱՌԱԿԸ

Մի հարուստ մարդու արտերն առատ պտուղ տուին: Նա ինքն իրան այսպէս էր մտածում. «Ո՞րտեղ ժողովեմ այսքան բերքերս, շտեմարաններս փոքր են. կքանդեմ դրանց. նորերը կշինեմ՝ աւելի մեծ, արտերիս բերքերն այնտեղ կհաւաքեմ: Էլ ինչ հողս ունիմ, երկար տարիներ կուտեմ, կխմեմ և կուրախանամ»: Նա փոխանակ այսպէս մտածելու՝ թէ քանի քանի աղքատներ կան, որոնք ոչինչ չունին, Աստուած ինձ այսքան բարիքներ է տուել, մի քիչ էլ նրանց համար բաժին հանեմ, միմիայն իւր համար մտածեց: Այս բանը դուր չեկաւ Աստծուն, ուստի հարստին հասկացնելու համար ասաց.

«Անմիտ, այս գիշեր որ քո հողին առնեմ, այսքան կարողութիւնդ ի՞նչ պիտի անես»:

Փոքրիկ մանուկներ, եթէ դուք էլ շատ բան ունենաք, չունեցողներին մի մոռանաք, նրանց էլ բաժին հանեցէք ձեր աւելորդից, թէ չէ Աստուած ձեր վարմունքն էլ չի հաւանի:

18. ԹԱԳՈՒՅԵԱԼ ԳԱՆՁԻ ԵՒ ՄԱՐԳԱՐՏԻ ԱՌԱԿ-ՆԵՐԸ

Մի մարդ ազարակում գանձ գտաւ: Ուրախութիւնից գնաց և ինչ որ ունէր չունէր ծախեց ու գնեց այդ ազարակը:

Մի վաճառական էլ մի գեղեցիկ մարգարիտ էր փնտռում, բայց իւր որոնածից աւելի լաւը գտաւ, իսկոյն վաճառեց իւր ունեցածը և գնեց այդ պատուական մարգարիտը:

19. ՄԵԾ ԸՆԹՐԻՔԻ ԱՌԱԿԸ

Մի մարդ մեծ ընթրիք պատրաստեց և ծառայի ձեռով շատերին հացի հրաւիրեց: Հրաւիրուածները բոլորն էլ մերժեցին զանազան անհիմն պատճառներով: Մէկն ասաց. «Արտ եմ գնել, պէտք է գնամ տեսնեմ, չեմ կարող գալ»:

կլոր ձև էին տալիս: Նաւի մէջ մտնելու իրաւունք ունէին միայն նրանք, որոնք մկրտուած էին, իսկ չմկրտուածները նաւի ետեւում էին կանգնում, ուր սիւներ կային՝ վարագոյրով միացւած: Չմկրտուածները այս վարագուրի ետեւում էին կանգնում, իսկ երբ սովորում էին Քրիստոսի պատուէրները, եպիսկոպոսը կամ քահանան քննում էր և ապա իրաւունք էին ստանում մկրտուելու և նաւի մէջ մտնելու:

Փոքր ինչ ետոյ նաւակի աջ ու ձախ կողմերում երկու փոքրիկ նաւեր ևս որոշեցին և այսպիսով եկեղեցին խաչի ձև ստացաւ, որ մինչև մեր օրերը պահպանուած է: Երբ քրիստոնէութիւնն ազատ կրօն դարձաւ, սկսեցին ամեն տեղ գեղեցիկ եկեղեցիներ շինել խաչաձև յատակագծով, որ ծագել է երեք նաւերի միաւորութիւնից: Կլոր ձևն էլ մեր ներկայ գմբէթն է, որ եկեղեցու մէջ տեղումն է: Եկեղեցու սիւները միանում են կամարներով, որ երկինքն է յիշեցնում մեզ: Եկեղեցու շինուածքը բաժանւում է երեք մասերի—գաւիթ, ատեն և բեմ:

21. ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Գաւիթ—Այժմեան եկեղեցիները գաւիթ չունին. սա հին եկեղեցու այն մասն է, ուր կանգնում էին չմկրտուածները (երեխաները):

Ատեն—Այն տեղն է, ուր կանգնում են հոգևորականները և ժողովուրդը: Եկեղեցու հին սովորութեան համաձայն՝ առաջ կանգնում են հոգևորականները, որ կոչւում է ղաւս, ետոյ տղամարդիկ, իսկ ամենից վերջը՝ կանայք: Սեղանի աջ կողմի պատի մէջ աւազանն է, իսկ նրա դիմաց՝ ըուրվառանցը:

Բեմ—Ատենից ետքն աստիճաններով բարձր է, մէջ տեղում շինած է վէմ քարից մի խաչաձև սեղան: Այս քարն օծում են և ապա վրան պատարագ մատուցանում—առանց սրան պատարագ չի կարելի անել: Բեմից է քարոզում եպիսկոպոսը: Այստեղ իրաւունք ունին բարձրանալ միայն հոգևորականները և կամ որոյ իրաւունք է տրուած: Սեղանը շինուած է բեմի վրայ. նրա առաջ վարագոյր կայ քաշած. հարկաւոր ժամանակ բաց են անում և ծածկում:

Բեմի վրայ վէմ քարի ուղղութեամբ շինւած է խաչկալը, որի աջ և ձախ կողմերում դռներ կան: Այս դռները վրայ պէտք է նկարել Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալների պատ-

Երկրորդն ասաց. «Հինգ լուծ եզն եմ գնել, պէտք է գնամ փորձեմ, թէ ինչպէս են քաշուում»: Երրորդն էլ ասաց. «Նոր եմ պսակուել, չեմ կարող դալ»: Այսպէս ամենքն էլ հրաժարուեցան անմիտ պատճառներ բերելով—արտը գնելուց ետոյ՝ տեսնելն ինչ հարկաւոր բան էր, նա պէտք է մինչև գնելը տեսնէր. և կամ եզները գնելուց ետոյ՝ փորձ անելն ինչ միտք ունէր, այդ բանը պէտք է գնելուց առաջ անէր, իսկ երրորդը կարող էր կնոջն էլ հետը տանէր, ինչ անենք թէ մենակ ինքն էր հրաւիրուել, տան տէրը նրան դուրս չէր անի:

Ծառան եկաւ և տիրոջը յայտնեց, որ հրաւիրուածները հրաժարուում են: Տանտէրը նեղացած ասաց ծառային. «Գնա՛ քաղաքի հրապարակները, փողոցները և հրաւիրի աղքատներին, խեղճերին, կաղերին և կոյրերին»: Ծառան այդպէս էլ արաւ և եկաւ յայտնեց տիրոջն այսպէս. «Տէր, քո հրամանը կատարեցի, բայց տանն էլի տեղ կայ հիւրերի համար»: Այն ժամանակ տէրըն ասաց ծառային. «Հիմա էլ գնա՛ քաղաքից դուրս, ճանապարհի վրայ ումը տեսնես, հրաւիրիր, որպէսզի տունս լցուի հիւրերով»:

Երբ տունը հիւրերով լցուեց, տանտէրն ասաց. «Ճշմարիտն եմ ասում, առաջին անգամ հրաւիրուած մարդկանցից ոչ մէկն իմ ընթրիքը չի ուտի»:

Փոքրիկ մանուկներ, Աստուած ամեն օր հրաւիրում է մեզ եկեղեցի, ուսումնարան . . . լսելու նրա պատուէրները, բայց շատերը չեն գնում և սրանով շատ բանից զրկւում են: Դուք այդ մարդոց նման մի վարուէք, եթէ ուզում էք բախտաւոր լինել:

Գ.

ԿԱՐԳ ԱՍՏՈՒԱԾ ՊԱՇՏՈՒԹԵԱՆ

20. Ե Կ Ե Ղ Ե Յ Ո Ւ Զ Ե Ի Ը

Հին ժամանակուայ քրիստոնեաները մեզ նման փառաւոր շէնքերով եկեղեցիներ չունէին: Նրանք հաւաքուում էին մի հասարակ տան մէջ՝ շատ անգամ՝ գեանափոր տներում և միասին աղօթում էին, իսկ աղօթքից ետոյ հացը կտրում էին, բաժանում և ապա՝ հաղորդւում: Տան վերեւի մասը փոքր ինչ բարձր էր. դա այն ժամակուայ սեղանն էր — այստեղից էր քարոզում քահանան:

Աւելի ուշ ժամանակներում աղօթատեղով եկեղեցու միջին մասին նաւի ձև տուին, որ նշանակում էր, թէ եկեղեցին մի նաւ է, որի մէջ մտնող քրիստոնեաները նաւում են դէպի նահանգիստ՝ երկնքի արքայութիւնը: Երբեմն էլ

կըր ձև էին տալիս: Նաւի մէջ մտնելու իրաւունք ունէին միայն նրանք, որոնք մկրտուած էին, իսկ չմկրտուածները նաւի ետեւում էին կանգնում, ուր սիւներ կային՝ վարագոյրով միացւած: Չմկրտուածները այս վարագուրի ետեւում էին կանգնում, իսկ երբ սովորում էին Քրիստոսի պատուէրները, եպիսկոպոսը կամ քահանան քննում էր և ապա իրաւունք էին ստանում մըկրտուելու և նաւի մէջ մտնելու:

Փոքր ինչ ետոյ նաւակի աջ ու ձախ կողմերում երկու փոքրիկ նաւեր ևս որոշեցին և այսպիսով եկեղեցին խաչի ձև ստացաւ, որ մինչև մեր օրերը պահպանւում է: Երբ քրիստոնէութիւնն ազատ կրօն դարձաւ, սկսեցին ամեն տեղ գեղեցիկ եկեղեցիներ շինել խաչածև յատակազծով, որ ծագել է երեք նաւերի միաւորութիւնից: Կըր ձևն էլ մեր ներկայ գմբէթն է, որ եկեղեցու մէջ տեղումն է: Եկեղեցու սիւները միանում են կամարներով, որ երկինքն է յիշեցնում մեզ: Եկեղեցու շինուածքը բաժանւում է երեք մասերի—դաւիթ, ատեան և բեմ:

21. ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Դաւիթ—Այժմեան եկեղեցիները գաւիթ չունին. սա հին եկեղեցու այն մասն է, ուր կանգնում էին չմկրտուածները (երեխաները):

Ատեան—Այն տեղն է, ուր կանգնում են հոգևորականները և ժողովուրդը: Եկեղեցու հին սովորութեան համաձայն՝ առաջ կանգնում են հոգևորականները, որ կոչւում է ղաւս, ետոյ տղամարդիկ, իսկ ամենից վերջը՝ կանայք: Սեղանի աջ կողմի պատի մէջ աւազանն է, իսկ նրա դիմաց՝ ըուրվառանոցը:

Բեմ—Ատենից ետքն աստիճաններով բարձր է, մէջ տեղում շինած է վեմ քարից մի խաչածև սեղան: Այս քարն օծում են և ապա վրան պատարագ մատուցանում—առանց սրան պատարագ չի կարելի անել: Բեմից է քարոզում եպիսկոպոսը: Այստեղ իրաւունք ունին բարձրանալ միայն հոգևորականները և կամ որոց իրաւունք է տրուած: Սեղանը շինուած է բեմի վրայ. նրա առաջ վարագոյր կայ քաշած. հարկաւոր ժամանակ բաց են անում և ծածկում:

Բեմի վրայ վեմ քարի ուղղութեամբ շինւած է խաչկալը, որի աջ և ձախ կողմերում դռներ կան: Այս դռների վրայ պէտք է նկարել Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալների պատ-

կերները, որոնք հայոց եկեղեցու զլխաւոր սիւ-
ներն են:



Երկու դռների մէջ տեղում վէմ քարի վրայ
երեք աստիճան է շինուած, որոց վրայ դրած են
ամենից բարձր՝ խաչ, ետոյ Քրիստոսի պատկերը
(դաստառակ), իսկ վերջը՝ աւետարան: Աստի-
ճանների ետեւում Աստուածածնի պատկերն է՝
Յիսուսին գրկած: Այս երեք աստիճանների վրայ
դրած է լինում միւռոնամանը և մասնատուփը:



Սեղանի աջ դը-
րան կողմում՝
ներսից ընծայա-
րանն է, որտեղ
սկիհն են պահուած:

Եկեղեցու հիմ-
քի զանազան կող-
մերում դնում են
առաքեալների,
աւետարանիչնե-
րի և Ս. Գրիգոր
Լուսաւորչի ա-
նուաներով օծած
քարեր—ընդամե-
նը 16 հատ և ա-
պա՝ սրանց վրայ
հիմն են ձգում,
որովհետեւ քրիս-
տոնէութիւնը սրանք տարածեցին ամեն տեղ—

հիմնեցին զանազան տեղերում եկեղեցիներ և
նրա հիմքը եղան: Այդ քարերը անոռաշ պիտի
լինեն որ նշանակում է, թէ առաքեալներն ու-
սում չունէին և Սուրբ Հոգւոյ շնորհով էին քա-
րոգում: Քարերը առաջ լուսնում են, որ նշանա-
կում է մկրտիչ և ապա օծում են, որ նշանա-
կում է դրոշմ: Բեմի վրայ է վէմ քարը—սա
Քրիստոսի օրինակն է, որ իւր հիմնած եկե-

դեցու սուրբ սեղանի վրայ բազմած է:

Բեմի աջ և ձախ կողմերում երկու խորաններ կան — աջակողմեանը զգեստաւորուելու համար է, իսկ ձախակողմեանը՝ զգեստները պահելու համար:

Շինութիւնն աւարտելուց ետոյ՝ եկեղեցին օծում են:

21. ՍՐԲԱԶԱՆ ԱՆՕԹՆԵՐ ԵՒ ԶԱՐԴԵՐ

Սկիհ—Այն անօթն է, որի մէջ պատարապիշը մաքուր գինի է ածում և անաղ ու անխմոր հաց՝ նշխարն է դնում: Սկիհի բերանին դնում են մի խուփ, որի անունն է մաղզմա: Սկիհը շինում են կամ ոսկուց և կամ արծաթից:

Մասնատուփ—Փոքրիկ տուփ է՝ ոսկուց կամ արծաթից շինած, որի մէջ դնում են մասը՝ կամ հաղորդը և երբ մինը յանկարծ հիւանդանում է կամ եկեղեցի չի կարողանում գալ, տուն են տանում և հաղորդում:

Միտոնաման—Նոյնպէս ոսկուց կամ արծաթից շինած մի աման է, ըստ մեծի մասին աղանու նման. մէջն ածում են սուրբ միւռոնը, մկրտում երեխաներին կամ պատկերներ օծում:

Քշոց—Քշոցը զարդ է, կոթը փայտից է,

իսկ վերևի կոր մասի վրայ վեց թեւան Սերովէ և Քերովէ հրեշտակապետների պատկերներ կան նկարած, որ նշանակում է, թէ նրանք ևս սպասաւորում են պատարագի ժամանակ: Կոթի վերին մասից թաշկինակ է կախած:

Բուրվառ—Մէջը կրակ են ածում և վրան խունկ ծխում, որ նշանակում է, թէ ինչպէս այդ խնկի ծուխը դէպի վեր է գնում, այսպէս էլ մեր աղօթքը դէպի Աստուած ենք ուղղում:

Խաչվառ—Սա եկեղեցական դրօշակ է—մի պատկեր՝ կտաւի վրայ, որի մի կողմում խաչելու թիւնն է, իսկ միւս կողմում՝ Աստուածածինը Յիսուսին գրկած: Պատկերը կախ է տուած մի ձողից, որի գլխին տնկած է խաչ:

Խնկաման—Փոքրիկ արկղ է, չորս անկիւններում մի մի խաչ, իսկ մէջ տեղում մոմի տեղ: Մէջը խունկ կայ, երբ սարկաւագը բուրվառ է անում, քահանան այստեղից խունկ է հանում և ածում կրակի վրայ: Սարկաւագը աջ ձեռով բուրվառն է բռնում, իսկ ձախով՝ խնկամանը:

23. Զ Գ Ե Ս Տ

1. ԴՊԻՐՆԵՐԻ ԿԱՄ ՏԻՐԱՑՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Շապիկ—Գլխից մինչև ոտները՝ երկայն սպի-

տակ կամ ծաղկեայ հասարակ՝ մաքուր շապիկ, որ նշանակում է, թէ ինչպէս արտաքուստ մաքուր է շորերը, այնպէս էլ ներքուստ՝ սիրտը սրանման մաքուր պիտի լինի:

2. Ս Ա Ր Կ Ա Ի Ա Դ Ի Հ Ա Մ Ա Ր

Ուրար—Երկայն, լայն ժապաւէնի նման, զառ կտորից, որ ձգում է ձախ թևի վրայ: Սա նշանակում է, թէ սարկաւազն աւետարանի լուծը դեռ ամբողջապէս չէ կրում, այլ՝ մասամբ, այն է ձախ ուսով: Սարկաւազը հագնում է և շապիկ:

3. Ք Ա Հ Ա Ն Ա Յ Ի Հ Ա Մ Ա Ր

Քահանան երբ զգեստաւորւում է և պատարագ է մատուցանում, ներկայացնում է Քրիստոսի կեանքը: Պատարագի զգեստները նշանակում են Քրիստոսի կրած չարչարանքները: Քահանայի զգեստները սրանք են—

Շապիկ—Երկայն, վզից մինչև ոտները, գոյնը սպիտակ: Սա նշանակում է այն սպիտակ հանդերձը, որ Հերովդէսը հագցրեց Քրիստոսին՝ ծաղրելու համար:

Գօտի—Նշանակում է այն խարսձանը, որով Քրիստոսին խփում էին՝ սեանը կապած:

Բազպան—Այն կապանքն է, որով հրէաները կապեցին Յիսուսի ձեռները Գեթսեմանում:

Փորուրար—Ասածու պատուիրանի լուծն է: Այս լուծը սարկաւազը ձախ ուսով է միայն տանում, իսկ քահանան՝ և՛ աջ և՛ ձախ ուսով—ամբողջապէս:

Շուրջառ կամ նափորտի—Նշանակում է կարմիր վերարկուն, որ ձգեցին Քրիստոսի վրայ:

Սաղաւարտ—Նշանակում է այն փշեայ պսակը, որ Քրիստոսի գլխին դրին:

Վահիս—Ուսերի վրայ է դնում քահանան, վրան նկարած է 12 առաքեալների պատկերները՝ մէջ տեղումը Քրիստոսը:

4. Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ի Հ Ա Մ Ա Ր

Եպիսկոպոսն ունի այն բոլոր զգեստներն ինչ որ քահանան:

Բացի դրանից ունի խոյր կամ թագ, որ միևնոյն նշանակութիւնն ունի, ինչ որ քահանայի սաղաւարտը:

Շմիճորոն—Հինգ խաչով զարդարուած լայն ուրար է, կրում են շուրջառի վրայից—սա է եպիսկոպոսական յատուկ զգեստը:

Արտախուրակներ—Երկու հատ, կէս կան-

գուն երկարութեամբ կապեր են, կախում են վաղասի ետեկից — սա զարդ է:

5. ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ ԿԱՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՄԱՐ

Բացի քահանայի և եպիսկոպոսի զգեստներից, ունի նաև կոնքնո, որը քառակուսի ձև ունի և կախուած է լինում գօտքից՝ ձախ կողմից և հասնում է մինչև ծունկը: Կոնքեռը նշանակում է, 1, այն ղեկավարը, որով Յիսուս աշակերտների ոտները լուաց, 2, հովուական մախաղ: Կոնքեռ կրելու իրաւունք միայն կաթողիկոսն ունի: Որտեղ կաթողիկոսը կանգնում է, այնտեղ նրա ոտների տակ փռում են մի փոքրիկ գորգ, որի վրայ արծիւ է նկարած, որ նշանակում է թէ կաթողիկոսն արծուի նման սրատես պիտի լինի:

24. ԵԿԵՂԵՑՈՒ ԳԼԽԱՒՈՐ ԳՐԳԵՐԸ

Եկեղեցում շատ տեսակ գրգեր են գործ դնում, բայց մենք կսովորենք միայն զլխաւորները:

1. Աւետարան — Սա մի գեղեցիկ գիրք է, վրան խաչ կայ: Քահանան նրանով օրհնում է եկեղեցի եկողներին: Աղօթաւորները երբ գուրս



ՄԵ. ԳՐԳԻՐ ԼՈՒՍԱՆՈՐԷ

են գնում ժամերգութիւնից ետոյ, համբուրում են այս սուրբ գիրքը: Սրա մէջ գրուած է Յիսուս Քրիստոսի կեանքը և նրա բոլոր քարոզութիւնները:

2. Շարական—Այս գիրքը եկեղեցու երգարանն է, նրա մէջ գրուած է այն հոգևոր երգերը՝ շարականները, որոնք երգում են եկեղեցում: Այս հոգևոր երգերը ունին ձայնանիշներ, որոց համաձայն երգում են քահանաները և զպիւրնները: Բոլոր շարականներն էլ մի տեսակ չեն երգւում, այլ զանազան եղանակներով՝ ձայնով: Չայնների թիւը ութն է: Շարականները հեղինակել են մեր սուրբ հայրապետները:

3. Խորհրդատու—Սա մի փոքրիկ գիրք է, գրած է լինում սեղանի վրայ: Քահանան այս գրքով է մատարագ մատուցանում:

4. Ընալոց—Սա մեծ գիրք է. կարգում են ճաշուայ ժամերգութեան ժամանակ, զրա համար էլ ասում են Ընալոց: Նրա մէջ գրուած է չին և Նոր-Ուխտից զանազան կտորներ՝ իւրաքանչիւր օրուայ համար առանձին առանձին, նոյնպէս մեր սուրբ հայրապետների գեղեցիկ աղօթքները:

5. Ժամագիրք—Քրիստոնեաները հասարակ օրերին օրը երկու անգամ՝ առաւօտեան և երեկոյեան գնում են եկեղեցի աղօթելու, իսկ կիրակէ, տօն և Մեծի պահոց օրերին՝ երեք ան-

գամ: Այս գրքում կարգով որոշուած է թէ առաւօտները, երեկոյները և ճաշին ինչ աղօթքներ, երգեր, սաղմոսներ և ընթերցուածներ պիտի կարդան և երգեն, զրա համար էլ գրքի անունն է Ժամագիրք, այսինքն ժամերի գիրք:

6. Մաշտոց—Այս գիրքն առաջին ագամ գրել է հայոց տառերի գտնող սուրբ Մեսրոպ Մաշտոցը, սրա համար էլ նրա անունով կոչւում է Մաշտոց: Այստեղ որոշուած են թէ եկեղեցու եօթը խորհուրդները և ծէսերը ինչպէս պիտի կատարել, օրինակ ինչպէս պէտք է երեխային մկրտեն, պսակ անեն, թաղեն, քահանայ, եպիսկոպոս, կաթողիկոս օծեն, մեռն օրհնեն....:

Յ Ա Ն Կ

Ա. ՀԻՆ-ՈՒԽՏ

ԵՐԵՄ

1. Իսրայելի նեղութիւնները Եգիպտոսում	3
2. Մովսէսի ծնունդը և ազատութիւնը .	6
3. Մովսէսի փախուստը	8
4. Աստուած կանչում է Մովսէսին . .	9
5. Եգիպտոսից դուրս գալը	11
6. Կարմիր ծովն անցնելը	14
7. Իսրայէլացիները անցնում են անապատով	16
8. Սինայի օրէնստուութիւնը	18
9. Ոսկէ հորթը	21
10. Լրաեմներ	24
11. Մովսէսի մահը	27
12. Յեսուն նուաճում է Քանանը	29
13. Գեղէնը որպէս իսրայելի դատաւոր .	31
14. Սամփսոն	36
15. Հեղի և Սամուէլ	40

Բ. ՆՈՐ-ՈՒԽՏ

16. Որոմի առակը	45
17. Անմիտ հարստի առակը	46

18. Թագուցեալ զանձի և մարգարտի առակները	47
19. Մեծ ընթրիքի առակը	»

Գ. ԿԱՐԳ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ

20. Եկեղեցու ձևը	49
21. Եկեղեցու բաժանումները	51
22. Սրբազան անօթներ և զարդեր . .	54
23. Զգեստ	55
24. Եկեղեցու զլխաւոր զրբերը	58

Ազատ

Առաքում

ԱՅ

Ca

1666

ՀԱՅ
ԿԵՆՏՐԱԼ

Ազատ

ՀԱՅ
ԿԵՆՏՐԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0145959

**ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ԿՐՕՆԻ
ՀԵՏԵԻԵԱԼ ԴԱՍԱԳՐԵՐԸ**

I. ՈՒՍՈՒՑՉԱՅ ՀԱՄԱՐ

ԱՏՈՐԻՆ ՇՐՋԱՆ		ԳԻՆՆ Է		ՁԵՂՁ
		Ռ.	Կ.	
1.	Ուղեցույց Հին-Ուխտի մասն Ա.	»	80	25
2.	Ուղեցույց Հին-Ուխտի մասն Բ.	»	85	25
3.	Ուղեցույց Նոր-Ուխտի մասն Ա.	1	»	35
4.	Ուղեցույց Նոր-Ուխտի մասն Բ.	1	5	35

ՄԻՋԻՆ ՇՐՋԱՆ

5.	Դասագիրք կրօնի հատ. Գ.	1	50	35
6.	Դասագիրք կրօնի հատ. Ե.	»	50	35
7.	Տասն պատուիրան	»	50	35

II. ԱՇԱՀԵՐՏԱՅ ՀԱՄԱՐ

8.	Դասատետր կրօնի (պատկ.) Ա. տարի	»	27	25
9.	Դասատետր կրօնի (պատկ.) Բ. տարի	»	25	25
10.	Դասատետր կրօնի (պատկ.) Գ. տարի	»	25	25
11.	Հին-Ուխտ (պատկերազարդ)	»	50	25
12.	Հին-Ուխտ (պատկ.) տաճկանայ բարբառով	»	40	25
13.	Նոր-Ուխտ	»	40	20
14.	Գործք առաքելոց (պատկերազարդ)	»	45	25
15.	Բարության սուրբիկներ (էթիկալ)	»	50	25

ՈՍՏԱՆԱՅԻՆ ԳՐԱՐԱՆ, ԵՆ ԳԻՄԵԼ—

1. Ինձ—Սա. և Կ. Գ. Սահակեանց. Бебутовская ул. №20.
2. Տիրախ բոլոր հալ գրավածառներին:

Գինն է 25 կոպ.